

## Արձանագրություն №7/2021-2022

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի` 2022թ. փետրվարի 24-ին տեղի ունեցած թիվ 7 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 87 (ութսունյոթ) անդամներից 70-ը (յոթանասունը):

Նիստը նախագահում էր ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Լևոն Հովսեփյանը:

Նիստը նախագահող Հ. Հովհաննիսյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և առաջարկեց հաստատել նիստի օրակարգը լրացումներով` ընթացիկ հարցերի թվում ներառել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման 2022թ. հայտերը երաշխավորելու մասին և «Developing Creative Writing: From Paragraph to Essay» աշխատանքը որպես բուհական դասագիրք վերահրատարակության երաշխավորելու մասին հարցերը:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը` առաջարկված լրացումներով:

1. Դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյան):
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային միավորի անվանակոչության կարգը հաստատելու մասին (զեկ.՝ ռեկտոր Հ. Հովհաննիսյան):
3. Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին (զեկ.՝ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյան):
4. Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին (զեկ.՝ իրավաբանական ծառայության պետ Ա. Թադևոսյան):
5. Երևանի պետական համալսարանի իրավաբանական ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին (զեկ.՝ իրավաբանական ծառայության պետ Ա. Թադևոսյան):

6. «Երևանի պետական համալսարանի անձնակազմի կառավարման բաժին» կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրությունը հաստատելու մասին (զեկ.՝ իրավաբանական ծառայության պետ Ա. Թադևոսյան):
7. Երևանի պետական համալսարանի ֆարմացիայի ինստիտուտի դեղապատրաստուկների որակի հսկման և մոնիթորինգի գիտատնտեսական կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին (զեկ.՝ ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի Ժ/պ Ս. Վարդապետյան):

### **Ընթացիկ հարցեր**

- 8.1. ԵՊՀ դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի պրոֆեսոր Արա Անանիկի Ալեքսանյանին «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» պատվավոր կոչում շնորհելու մասին:
- 8.2. ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Կրոնի տեսության և պատմության» ամբիոնի անվանափոխության մասին:
- 8.3. ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների և քաղաքական գիտության տեսության և պատմության ամբիոնների միավորման եղանակով վերակազմավորման վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու մասին:
- 8.4. ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության և որակի ապահովման հանձնաժողովների կազմում փոփոխություններ կատարելու մասին:
- 8.5. «Developing Creative Writing: From Paragraph to Essay» աշխատանքը (հեղ.՝ Մ. Օհանյան, Ա. Օհանյան) որպես բուհական դասագիրք վերահրատարակության երաշխավորելու մասին:
- 8.6. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության ԵՊՀ բազային ֆինանսավորման 2023թ. հայտերը երաշխավորելու մասին:
- 8.7. Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման ընթացքի (2021-2022 ուստարի) մասին:

**1.Լսեցին.**-Դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին: Գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյանը ներկայացրեց, որ հանձնաժողովն ուսումնասիրել է դոցենտի գիտական կոչման 4 հավակնորդների ներկայացրած փաստաթղթային փաթեթները, ինչի արդյունքում դոցենտի գիտական կոչման 3 հավակնորդներ ստացել են դրական երաշխավորություն և ներկայացվել գիտական խորհրդի հաստատմանը:

Դոցենտի գիտական կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Մարգարյան Ալեքսան Շամիլի	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ընդհ. մաթեմատիկայի և բնագիտ. ամբ. ասիստենտ
2.	Խաչիկյան Տիգրան Աշոտի	քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ
3.	Ղարսյան Աշխեն Ռուբենի	քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ

Ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Ալեքսան Բաղդասարյան (նախագահ)
2. Լևոն Հակոբյան
3. Արուսյակ Գրբոյան

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 70 անդամներից 67-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Սահարյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին .

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ
1.	Մարգարյան Ալեքսան Շամիլի	65	2
2.	Խաչիկյան Տիգրան Աշոտի	66	1
3.	Ղարսյան Աշխեն Ռուբենի	65	2

**Որոշեցին.** - Դիմել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ դոցենտի գիտական կոչումներ շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

**2.Լսեցին.**- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային միավորի անվանակոչության կարգը հաստատելու մասին: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը նշեց, որ առաջարկվող կարգը քննարկվել է գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության մշտական հանձնաժողովում, ստացել

դրական եզրակացություն: Ըստ նրա՝ ԵՊՀ-ում անվանակոչության ոլորտը հստակ կանոնակարգելու անհրաժեշտություն էր առաջացել, և կարգը նպատակ ունի լուծել այդ խնդիրը: Անվանակոչության հարցերը լսվելու են ԵՊՀ գիտական խորհրդում՝ հստակ հիմնավորումների դեպքում միայն:

**Որոշեցին.** – Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային միավորի անվանակոչության կարգը:

**3.Լսեցին.**– Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը նկատեց, որ նոր խմբագրությամբ կարգում արված փոփոխությունների հենքը գաղափարական է, որի նպատակը ԵՊՀ միջազգային տեսանելիության բարձրացումը և միջազգային գիտական հեղինակության վրա ազդող գործոնների խրախուսումն է: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը նշեց, որ նոր խմբագրությամբ կարգը բխում է ԵՊՀ 2022-26 թթ. ռազմավարական ծրագրում ամրագրված դրույթներից: Նոր կարգով լրավճարների հաշվարկն ու վճարումը իրականացվելու է եռամսյակային սկզբունքով: ԵՊՀ հրատարակչության տնօրեն Կ. Գրիգորյանն առաջարկեց կարգում ներառել առնվազն 50 % արտասահմանյան անդամներ ունեցող խմբագրական կազմերով և անգլերեն տպագրվող ԵՊՀ պարբերականների և ԵՊՀ հրատարակչության կողմից տպագրվող անգլերեն մենագրությունների համար ևս սահմանել լրավճարներ: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանն ընդունելի համարելով նման լրացումը՝ առաջարկեց այն ներառել կարգում:

**Որոշեցին.** – Հաստատել Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը (նոր խմբագրությամբ):

**4.Լսեցին.**– Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին: Իրավաբանական ծառայության պետ Ա. Թադևոսյանը նշեց, որ 2021թ. ՀՀ կառավարության որոշմամբ կատարված փոփոխություններով պայմանավորված կարգի խմբագրության անհրաժեշտություն էր առաջացել: Ըստ նրա՝ նոր խմբագրությամբ կարգում առանձնացվել է նոր բաժին պետության կողմից մասնակի փոխհատուցումների վերաբերյալ, հստակեցվել մարտական ծառայության ժամանակ զոհվածների երեխաներին փոխհատուցման կարգը: Բացի այդ, ներկայացված նախագիծը խմբագրվել է նաև զուտ գործընթացի իրականացման մասով:

**Որոշեցին.** – Հաստատել Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը (նոր խմբագրությամբ):

**5.Լսեցին.**- Երևանի պետական համալսարանի իրավաբանական ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին: Իրավաբանական ծառայության պետ Ա. Թադևոսյանը նշեց, որ ԵՊՀ-ում իրականացված կառուցվածքային փոփոխություններով անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության վրա ստեղծվել էին 2 առանձին ստորաբաժանումներ՝ իրավաբանական ծառայություն և անձնակազմի կառավարման բաժին, որոնց կանոնադրությունների հաստատման անհրաժեշտություն էր առաջացել: Արհեստակցական կազմակերպության նախագահ Ա. Ավետիսյանն առաջարկեց իրավաբանական ծառայության գործառույթներում ներառել նաև աշխատանքային իրավահարաբերությունների հետ կապված անհատական իրավական ակտերի համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրության պահանջներին ստուգելու և եզրակացություն տալու մասին դրույթը, ինչը հավանության արժանացավ:

**Որոշեցին.** – Հաստատել «Երևանի պետական համալսարանի իրավաբանական ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրությունը:

**6.Լսեցին.**- «Երևանի պետական համալսարանի անձնակազմի կառավարման բաժին» կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրությունը հաստատելու մասին: Իրավաբանական ծառայության պետ Ա. Թադևոսյանը նշեց, որ կանոնադրության նախագիծը պայմանավորված է կադրերի կառավարման բաժնի՝ որպես առանձին ստորաբաժանման ստեղծման հանգամանքով:

**Որոշեցին.**- Հաստատել «Երևանի պետական համալսարանի անձնակազմի կառավարման բաժին» կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրությունը:

**7.Լսեցին.**- Երևանի պետական համալսարանի ֆարմացիայի ինստիտուտի դեղապատրաստուկների որակի հսկման և մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին: Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի ժ/պ Ս. Վարդապետյանը նշեց, որ 2021թ. ստեղծվել էր դեղապատրաստուկների որակի հսկման և մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոն, ինչի կապակցությամբ առաջացել էր կենտրոնի կանոնադրություն ունենալու անհրաժեշտություն:

**Որոշեցին.**- Հաստատել Երևանի պետական համալսարանի ֆարմացիայի ինստիտուտի դեղապատրաստուկների որակի հսկման և մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոնի կանոնադրությունը:

**8. Լսեցին.-** ԵՊՀ դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի պրոֆեսոր Արա Անանիկի Ալեքսանյանին «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» պատվավոր կոչում շնորհելու մասին:

**Որոշեցին.-** ԵՊՀ դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի պրոֆեսոր Արա Անանիկի Ալեքսանյանին շնորհել «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» պատվավոր կոչում:

**9. Լսեցին.-** ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Կրոնի տեսության և պատմության» ամբիոնի անվանափոխության մասին: Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը նշեց, որ առաջարկվում է «Կրոնի տեսության և պատմության» ամբիոնը անվանափոխել «Կրոնագիտության» ամբիոնի:

**Որոշեցին.-** ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Կրոնի տեսության և պատմության» ամբիոնն անվանափոխել «Կրոնագիտության» ամբիոնի:

**10. Լսեցին.-** ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների և Քաղաքական գիտության տեսության և պատմության ամբիոնների միավորման եղանակով վերակազմավորման վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու մասին:

**Որոշեցին.-** ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների և Քաղաքական գիտության տեսության և պատմության ամբիոնների միավորման վերաբերյալ առաջարկություն ներկայացնել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին:

**11. Լսեցին.-** ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության և որակի ապահովման հանձնաժողովների կազմում փոփոխություններ կատարելու մասին: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանն առաջարկեց ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի կազմից հանել Արթուր Իսրայելյանին՝ հանրային կապերի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի և որակի ապահովման հանձնաժողովի կազմից հանել Ժասմեն Աղասյանին՝ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետի պաշտոններից ազատվելու կապակցությամբ:

**Որոշեցին.-**

1. ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության և որակի ապահովման հանձնաժողովի կազմից հանել Արթուր Իսրայելյանին:
2. ԵՊՀ գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի կազմից հանել Ժասմեն Աղասյանին:

**12.Լսեցին.**- «Developing Creative Writing: From Paragraph to Essay» աշխատանքը (հեղ.՝ Ս. Օհանյան, Ա. Օհանյան) որպես բուհական դասագիրք վերահրատարակության երաշխավորելու մասին:

**Որոշեցին.**- «Developing Creative Writing: From Paragraph to Essay» աշխատանքը (հեղ.՝ Ս. Օհանյան, Ա. Օհանյան) որպես բուհական դասագիրք երաշխավորել վերահրատարակության:

**13.Լսեցին.**- ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության ԵՊՀ բազային ֆինանսավորման 2023թ. հայտերը երաշխավորելու մասին: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը նշեց, որ բազային ֆինանսավորումը մոտ կրկնակի աճել է և հաջորդ տարի ևս բարձրացում է նախատեսվում:

**Որոշեցին.**- Երաշխավորել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության ԵՊՀ բազային ֆինանսավորման 2023թ. հայտերը:

Գիտական խորհրդի նախագահ՝

Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

03.03.2022թ.